ՄԱԿԱՐԱՎԱՆՔԻ ՄԻՋՆԱԴԱՐՅԱՆ ԽԵՑԵՂԵՆԸ

Հայաստանի միջնադարյան ճարտարապետական հուշարձանների գլուխգործոցներից է Մակարավանքի համալիրը, որը գտնվում է պատմական Հայաստանի Մեծ Կայեն գավառում (այժմյան Իջևանի շրջանի Աշաջուր գյուղից 3 կմ հարավ-արևմուտք)։ Մակարավանքը կառուցված է X—XIII դդ., բաղկացած է Հին եկեղեցուց (X—XI դդ.), Աստվածածին եկեղեցուց (1198 թ.), գավթից (1224 թ.), մատուռից և պարսպապատերից։ Մասնավորապես հետաքրքիր է գավթի թվագրությունը (1224թ.)[1], քանի որ ներքոհիշյալ ամրողջական անոթները և մի քանի խոշոր բեկորներ գտնվել են նրա փլված ծածկի լիցքի մեջ։ Քննարկվող նյութերը ներկայացնում են բազմաթիվ հասարակ և զարդարված խեցեղենի բեկորներ և մի քանի ամբողջական անոթներ, որոնք բաժանվում են հետևյալ խմբերի[2]։

Կուբասներ.— Ներկայացված են տարբեր կարասների բեկորներով։ Մեկ կարասի եզրի շուրջը կլորավուն է, դուրս ճկված։ Պսակի տակով անցնում է սեղմված զարդ (Նկ. 1_1)։ Մյուս կարասի իրանի բեկորներից մեկը դեղին է, դարչնագույն կետերով, վրայով անցնում է ուռուցիկ եղևնաձև զարդագոտի (Նկ 1_2)։ Երրորդ կարասի իրանի բեկորը ավելի բարակ է, նույն գույնի, զարդարված է երկու ուռուցիկ գծերով, կենտրոնում ճզմվածքով (Նկ. 1_3)։ Նման կարասներ հայտնի են Դվինից[3], Որոտնավանքից[4], Բերքաբերից, Օրենկալայից[5], Հին Գանձակի[6] XII—XIII դդ. շերտից և այլն։

Մեկ կանթանի կարասներ.— Ներկայացված են երեք (մեկի հատակը թերի է) ամբողջական սափորներով և չորս բեկորներով։ Չնայած նրանց տիպարանական նմանություններին, սափորներն ունեն նաև տարբերիչ գծեր, այդ պատճառով տեղին ենք գտնում դրանք նկարագրել առանձին-առանձին։ Առաջինը դորշ գույնի է (Նկ. 1_4), ձգված իրանով, բարձր պարանոցով, կլորավուն շրթով, լայն և տափակ հատակով։ Պսակի տակից դեպի իրանն է ձգվում լայն կանթը։ Պսակի տակով անցնում է հորիզոնական ուռուցիկ գիծ (բարձր. 45 սմ, իրանի տր. 25 սմ, շուրթինը՝ 10 սմ)։

Երկրորդը (Նկ. 1_5, պահպանվել է իրանի վերին մասը) առաջինից տարբերվում է պարանոցի հարդարանքով և կանթի ձևով։ Կանթը տափակ է, ոչ մեծ ելուստներով եզրերում և երկու սրածայր ելուստներով վերին մասում։ Կանթի մակերեսը հարդարված է բազմաշար հատիկաձև զարդանախշով, ներքին մասում ոչ

---

1 Մ. Ա. Ավագյան, Հ. Մ. Ջանիոլադյան. Դիվան հայ վիմագրության, պր. 4, Իջևանի շրջան. Երևան, 1971, էջ 153։

2 Հոդվածում քննարկվող նյութերը հավաքվել են Ա. Ա. Քալանթարյանի կողմից Մակարավանքի հուշարձանախմբի վերականգնման աշխատանքների ժամանակ 1970 թ.։ Օգտվելով առիթից, շնորհակալություն ենք հայտնում Ա. Ա. Քալանթարյանին, չհրատարակված նյութերը մեզ տրամադրելու համար։

3 Կ. Գ. Ղաֆադարյան. Դվին քաղաքը և նրա պեղումները. Երևան, 1952, էջ 195։ Ա. Ա. Քալանթարյան. Դվինի նյութական մշակույթը IV—VIII դդ. Երևան, 1970, էջ 21։ Նույնի՝ Դվին 1-ին (Կենտրոնական թաղամասի պեղումները 1964—1970 թթ.). Երևան, 1976, էջ 47։

4 Ա. Ա. Քալանթարյան. Որոտնավանքի խեցեղենը.—ՀՍՍՀ ԳԱ «Լրաբեր հաս գրտ.», 1967, № 4, տախտ. 1, նկ. 1։

5 А. Л. Якобсон. Раскопки на городище Орен-Кала.—Материалы и исследования по археологии СССР (МИА). 67, М.—Л., 1959, с. 93.

6 И. М. Джафар-Заде. Историко-археологический очерк старой Гянджи. Баку, 1949, с. 38, рис. 13.

մեծ ձվաձև ներճկմամբ։ Պսակի տակով անցնում են երկու ուռուցիկ գծեր։

Երրորդ սափորը (Նկ 1₆) գորշ է։ Իրանը ուռուցիկ է, բարձր, քիչ լայնացող պարանոցով, կլոր շրթով։ Հատակը լայն է և տափակ։ Պարանոցի կենտրոնից դեպի անոթի իրանի վերին մասը կիսակլոր իջնում է կտրվածքում ձվաձև կանթը։ Պարանոցը զարդարված է ուռուցիկ գծով։ Իսկ իրանի վերին մասը՝ երեք անփույթ անցկացված հորիզոնական գծերով (բարձր. 32 սմ, տր. 23 սմ, շուրթի տր. 13 սմ)։

Մյուս երկու սափորները ներկայացված են երկու ոչ մեծ կարմիր անգոբապատ անոթների պարանոցների բեկորներով, բարձր նեղ վզերով և կլոր դուրս ցցված շրթերով (Նկ. 1₇)։ Դրանցից մեկը ունի կլորավուն շուրթ և լայն կանթ։ Կանթի ստորին մասում իրանի վրայով անցնում է ուռուցիկ գիծ։ Նմանատիպ սափորներ հանդիպում են Դվինի VI—IX դդ. շերտերում, որտեղ դրանք հարատևում են մինչև X—XIII դդ., Որոտնավանքում[7], Կապաղակում[8], Օրենկալայում[9], Անդրկովկասի և Հայաստանի այլ հուշարձաններում։

Մակարավանքում գտնված խեցեղենի մյուս խումբը կազմում են լայն բերանով անկանթ կճուճները (5 օրինակ)։ Նրանցից մեկը վարդագույն է, կլոր դուրս ցցված իրանով, լայն



Նկ. 1

---

7 Ա. Ա. Քալանթարյան. Դվին 1-ին, էջ 49։ Նույնի՝ Որոտնավանքի խեցեղենը. տախտ. 2-րդ։

8 Ю. Ш. Исмизаде. О раскопках в Кабале на территории Южной части городища в 1960 г.—Материальная культура Азербайджана (МКА). V, Баку, 1964, табл. III.

9 Г. М. Ахмедов. Неполивная керамика Орен-Кала IV—XI вв.—МИА, 67, табл. V, рис. 3.

կարհ վզով, թեք կտրված շրթով։ Հատակը կոտրված է (նկ. 1_8)։ Իրանի վերին մասը հարդարված է հորիզոնական գծերով, երկար խոշոր դիգպագով, որը եզրագծված է իրանի կենտրոնով անցնող հորիզոնական գծով։ Մյուս երեքը դորշ են, նույն ձևն ունեն, տարբերվում հարդարված է երկու հորիզոնական գծերով։ Վերին մասում երևում են բազմաշար բարակ գծերի հետքեր։ Խեցեղենի այս խումբը հաճախ հանդիպում է Հայաստանի և Անդրկովկասի XII—XIII դդ. բոլոր հուշարձաններում։

Մակարավանքի խեցեղեն իրերի հավաքա-



Նկ. 2

ևն կլոր շրթով։ Մեկի հատակը տափակ է, մյուսինը փոքր նստուկով (նկ. 1_9)։ Հարթ հատակով սափորի իրանը հարդարված է հորիզոնական բազմաշար գծերով, կլոր և ձվաձև փոսիկներով։

Այս խմբին պայմանականորեն միացրել ենք նաև երկու այլ անոթ, որոնք կարող են լինել և՛ անկանթ սափորներ, և՛ փոքր կարասներ։ Դրանցից մեկը (նկ. 1_{10}) կարմիր գույնի է, պահպանվել է միայն իրանի վերին մասը, այն քիչ ձգված է, պարանոցը երկար է և ունի ուղիղ կտրված շուրթ։ Երկրորդը դեղին գույնի է, պահպանվել են միայն պարանոցը և ներքին մասում սեղմված ուղիղ շուրթը։ Պարանոցը ծուում կան նաև կավե անոթների երկու բեկորներ, որոնք իրենց ձևերով հիշեցնում են մետաղե կաթսաներ։ Մեկը (նկ. 1_{11}) ունի ոչ բարձր պարանոց և ոչ մեծ կլորավուն շուրթ։ Կտրվածքում տափակ կանթը իջնում է շուրթից դեպի ուսը։ Պարանոցի և իրանի հատման տեղում անցնում են երեք շարք ներճկված հորիզոնական գծեր։ Երկրորդ բեկորն ունի նույն կառուցվածքը, տարբերվում է ավելի փոքր չափերով։ Իրանի և պարանոցի հատման տեղում անցնում են երկու շարք ներճկված գծեր։ Երկու սափորների կանթերի ծայրերը քիչ բարձրացված են։ Սրանց շարքում պետք է

դասել, հավանաբար, կճուճների իրանի տարբեր մասերի սև և դարչնագույն բեկորները. վարդագույն և դարչնագույն աստառով, հարդարված նմանատիպ (գծավոր) վերադիր գոտիով, որի տակով անցնում են զիգզագաձև ուռուցիկ գծեր (նկ. 1_{12})։ Նման կավանոթներ հայտնի են Դվինից[10], Դիլիջանից[11], Բերքաբերից, Հին Գանձակից[12], Օրենկալայից[13] և այլն։

Դաշազարդ խեցեղեն.—Ներկայացված է չորս տարբեր անոթների անգոբապատ բեկորներով։ Դրանցից մեկը (նկ. 2_1) կարմիր անգոբապատ անոթի իրան է. հարդարված է երկու ուռուցիկ գծերից բաղկացած դաշազարդով, լցված բազմաշար, միմյանց հաջորդող ձվաձև զարդանախշերով։ Մյուս բեկորը (նկ. 2_2) կլոր սափորի պարանոց է։ Շուրթը կլոր է, թեքված դեպի ներս։ Պարանոցը հարդարված է խորը ներճկված սեպաձև զարդանախշով, ինը տերևաձև վարդյակներով և ուռուցիկ հորիզոնական գծով։ Երրորդ բեկորը (նկ. 2_3) ներկայացնում է մի այլ անոթի պարանոց, որն ունի դուրս ճկված պսակ։ Նրա տակով անցնում է ուռուցիկ գոտի՝ հարդարված բազմաշար գծիկներով, ոչ խորը օվալաձև փոսիկներով, որոնցից ներքև անցնում են լայն, կարմիր անգոբապատ և ավելի նեղ, կաթնագույն գոտիներ։ Վերջին բեկորը (նկ. 2_4) ներկայացնում է անոթի կանթը և շուրթի մի փոքր մասը։ Պսակը թեքված է դեպի ներս, կանթը հարդարված է տափակ ելուստով և կլոր փոսիկով։ Այս խմբի խեցեղենը հայտնի է Անիից[14], Դվինից[15], Գառնիից[16], Օրենկալայից[17], Գանձակից[18] և այլ պեղումներից (X—XIII դդ.)։

Առանձին խմբով են հանդես գալիս անոթների երեք բեկորներ։ Դրանցից մեկը անգոբապատ է, պատրաստվել է մանրահատիկ կավից և ներկայացնում է սափորի հատակի և իրանի մաս, որը զարդարված է ուղղահայաց խորը ակոսիկներով (նկ. 2_5)։

Մեծ խմբով են ներկայացված խոհանոցային խեցեղենի սև և կարմիր բեկորները, որոնց մի մասը մրապատ է (նկ. 2_7-$_9$)։ Սրանց մեծ մասը զարդարված է հասարակ երկրաչափական զարդանախշով՝ հորիզոնական ուղիղ և ալիքաձև գծերի, թեք գծիկների և ավելի քիչ՝ հատիկազարդի տեսքով։ Նույն խմբի երեք այլ անոթներ նախշված են ուղղահայաց ակոսիկներով, դրանցից մեկը լրացուցիչ զարդարված է ուռուցիկ գծով և կարճ թեք գծիկներով (նկ. 2_6)։ Խեցեղենի այս խումբը հաճախ է հանդիպում Հայաստանի և Անդրկովկասի միջնադարյան հուշարձաններում (բացառությամբ ակոսիկներով անոթների)։

Մեծ խումբ են կազմում քրեղանները (նկ. 3_1-$_3$), որոնց մեծ մասը կարմիր անգոբապատ, ոչ մեծ, խորը անոթների բեկորներ են, կլորավուն, ուղիղ կամ դեպի ներս թեքվող պսակներով։ Որպես կանոն, դրանք պատկերազարդ չեն և միայն երբեմն շուրթի տակով անցնում են մեկ կամ երկու ներճկված հորիզոնական գծեր։ Պահպանված հատակների մի մասն ունի օղակաձև բարձր նստուկ, բնորոշ տվյալ ժամանակաշրջանի համար։

Միակ նմուշով է ներկայացված ձեռքը։ Այն ունի խոշոր սափորի տեսք (նկ. 2_{10})։ Պարանոցը բարձր է, կլոր դուրս ճկված պսակով։ Պարանոցի տակով անցնում են երկու խորը ներճկված գծեր։ Իրանի կենտրոնում կա հորիզոնական մեծ բոնակ, կողերից շրջանաձև ելուստ՝ միջանցիկ անցքով։ Նման ձեռքեր դիպ են հանդիպում միջնադարյան Հայաստանի հուշարձաններում։ Դրանք գտնվել են Կարմիր բլուրի միջնադարյան շերտում[19], Որոտնավանքում, Սպիտակում[20]։

Խուփերը ներկայացված են յոթ բեկորներով։ Դրանցից մեկը խոշոր խուփի բեկոր է, ըստ երևույթին թոնրի կամ կարասի, պատրաստված վատ թրծված կավից, կարմիր անգոբապատ մակերեսով։ Նրա եզրերը կլորավուն բարձրացված են (նկ. 3_{10})։ Գորշ և կարմրավուն

10 Կ. Գ. Ղաֆադարյան. Դվին քաղաքը և նրա պեղումները, էջ 174։

11 Պահվում է Դիլիջանի գավառագիտական թանգարանում։

12 И. М. Джафар-Заде. Указ. соч., с. 4—6.

13 Г. М. Ахмедов. Указ. соч., с. 181.

14 И. Орбели. Развалины Ани. СПб., 1911, с. 52—53; Г. Чубинов. Декоративное убранство Анийских карасов. Т. 5, Петроград, 1917, табл. XIII, рис. 1—5.

15 Կ. Գ. Ղաֆադարյան. Նշվ. աշխ., էջ 188, նկ. 166—169։ Ֆ. Բաբայան. Միջնադարյան Հայաստանի գեղարվեստական խեցեղենի զարդաձևերը. Երևան, 1981, նկ. 30—32։

16 Բ. Ն. Առաքելյան, Գ. Հ. Կարախանյան. Գառնի 3-րդ. Երևան, 1962, էջ 82, նկ. 38։

17 Г. М. Ахмедов. Указ. соч., с. 198.

18 И. М. Джафарзаде. Указ. соч., с. 10, рис. 32.

19 Բ. Ն. Առաքելյան. Քաղաքները և արհեստները Հայաստանում 9—13-րդ դդ. Երևան, 1958, տախտ. 37։

20 Ա. Ա. Քալանթարյանի պեղումները. նյութերը հրատարակված չեն։



Նկ. 3

գույնի երկու մյուս բեկորներն ունեն ավելի փոքր չափեր և ըստ երևույթին ծառայել են որպես կարասների կամ խոշոր կճուճների խուփեր (Նկ. 3_9)։ Սրանց եզրերը նույնպես բարձրացված են, զարդարված թեք գծիկներով և սեղմումով։ Գտնվել են նաև տարբեր խուփերի բռնակներ, որոնցից յուրաքանչյուրը կազմում է առանձին տիպ։ Դրանցից առաջինը սրացող է, ելուստավոր (Նկ. 3_{14})։ Երկրորդը ցցուն փոսիկավոր բռնակ է, որի եզրերը զարդարված են ուռուցիկ գծերով (Նկ. 3_{17})։ Երրորդ բռնակը նույնատիպ է (Նկ. 3_{15})։ Չորրորդը աղեղնաձև բռնակ է, կենտրոնում ուռուցիկ ելուստով (Նկ. 3_{16})։ Վերը նշված խուփերը

լայնորեն հայտնի են Հայաստանի և Անդրկովկասի միջնադարյան հուշարձաններից, որտեղ դրանք հանդիպում են VIII դարից և հարատևում մինչև XIII դարը։

Գտնվել են նաև ձիթաճրագներ, որոնք բաժանվում են երկու խմբի։ Առաջինին են պատկանում կոպիտ զանգվածեղ ձիթաճրագները՝ տափակ հատակով, բարձր ուղիղ եզրագծերով և պատրույգի համար ոչ մեծ քթով (ծորակով, նկ. $3_{11, 12}$)։ Երկրորդ խմբին են վերաբերում կարմրավուն կավից նուրբ ճրագները, ոչ մեծ կլորավուն նստուկով, ձգված բռնակով և պատրույգի համար արված ոչ մեծ քթով (նկ. 3_{13})։

Դվինից գտնված նման հասարակ և ջնարակած ճրագները քթի հակառակ կողմում ունեն դուրս ցցված բռնակ։ Այդպիսիք լայնորեն հայտնի են Հայաստանի և Անդրկովկասի վերոհիշյալ հուշարձաններից, որտեղ նրանք օգտագործվել են XI—XIII դդ.։

Ջնարակած խեցեղեն.— Ներկայացված է քրեղանների տարբեր բեկորներով։ Դրանց մեծ մասը ջնարակով պատված է միայն ներքուստ և միայն երկու բեկոր՝ արտաքուստ։ Ջնարակը մեծ մասամբ միագույն է, կանաչ, ավելի քիչ՝ գեղին, վրան հանդիպում են երկրաչափական զարդեր՝ զուգահեռ գծերի, առանձին գոտիների, երբեմն էլ պարույրների տեսքով։ Նման զարդանախշերը և ջնարակման եղանակը լավ հայտնի են Հայաստանի և Անդրկովկասի ժամանակամերձ խեցեղենում։

Այս նույն հավաքածուի մեջ է մտնում նաև ծայրերը փշրված երկաթի օղակի տեսք ունեցող դռան երկաթե փակի բեկորը։ Համանման առարկաներ գտնվել են Օրենկալայի XII—XIII դդ. շերտից[21]։

Մակարավանքի խեցեղենը, որը գտնվել է հաստատուն թվագրություն ունեցող X—XIII դդ. հուշարձանից, որոշակի հետաքրքրություն է ներկայացնում Հայաստանի և Անդրկովկասի հնավայրերից հայտնի նմանատիպ խեցեղենի ուսումնասիրության համար։

Մակարավանքի խեցեղենը երևան է բերում որոշակի կապեր Արարատյան դաշտի, Ուտիքի և Արցախի միջնադարյան հուշարձանների նյութերի հետ։

---

21 А. Л. Якобсон. Раскопки на городище Орен-Кала, с. 139, рис. 110.

Հ. Ս. ԵԼԱՅԱՆ

НОВЫЙ ДОКУМЕНТ О М. НАЛБАНДЯНЕ

12 апреля 1866 года в Камышине, вдали от родного Нахичевана, умер революционер-демократ, поэт и публицист Микаэл Налбандян. После смерти имя Налбандяна становится символом борьбы прогрессивных сил широких слоев армянского общества в России, Франции, в Османской империи. Ни арест, ни казематы Петропавловской крепости, ни ссылка, ни более «тонкие формы» гонений—клевета, провокации—не смогли вытравить влияние идей Налбандяна и глубокого уважения к нему при жизни и к его посмертной памяти. Примерно через год после смерти М. Налбандяна между Азиатским департаментом Министерства иностранных дел России, Российской миссией в Константинополе, Департаментом духовных дел иностранных исповеданий Министерства внутренних дел завязывается переписка по «Армянскому делу». Поводом послужили армянские демонстрации в Константинополе и публикации о них в иностранных (французских) газетах. Директор Азиатского департамента МИД России П. Н. Стремоухов затребовал объяснений у подведомственной ему дипломатической миссии в Константинополе. Письмом от 25 апреля (7 мая) 1867 г. российский посланник П. Игнатьев сообщает:

«Ввиду распространяемых иностранными газетами ложных слухов о демонстрациях, делаемых здешними армянами против императорского правительства, нужным считаю обратить внимание Вашего превосходительства на обстоятельства, послужившие поводом к таковым слухам.

Несколько времени тому назад под руководством французской и радикальной партии здешними армянами были устроены театральные представления на армян-